

Լեզուով խօսին զըրուցեն
Խօսք նենգաւոր շողորորթ:

Դատէ զնոսա, Տէր Աստուած,
Չար խորհուղներն արգիլէ.
Դառնացուցին սիրտդ զըթած,
Թող կորսուին աշխարհքէ:

Նոքա ուրախ միշտ լինին
Որք՝ Աստուծոյ կը յուսան.
Տէր է իրենց պաշտպանին,
Պիտի ցընձան յաւիտեան.

Որք կը սիրեն, Տէր, ըզքեզ,
Եւ անուևովդ կը պարծին.
Դու Հաճութեամբ կու սըփռես
Որհնենքդ՝ վահանդ վըրանին:

Շարունակիկ

Հ. ԳԵՐՈՎՅԷ Վ. ԳՈՒՇՆԵՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾԱԴԻՐ-ՄՆԱՅՈՒՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ

ԿՏԱԿԻՆ ՅՈՎԱԾՓԱՅ ԻԶՄԻՐԵԱՆՅ

Սահակ-Մեսրոպեան Գրական Մրցանակաբաշխութիւնն՝ որ բարեյիշատակ Յովսէփ Իզմիրեանցի կողմէ հաստատուած է, պիտի կատարուի յառաջիկայ 1890 տարւոյ, Յունիս 21ին, Սրբոց Թարգմանչաց տօնի օրն, յԱզգային Պատրիարքարանի: Հետեւապէս Գործադիր-Մնայուն Յանձնաժողովս կը փութայ այսու Յայտարարութեամբ վերստին հրաւիրել այն հեղինակներն ու բանասէրներն, որ ունին ազգային Լեզուաքննութեան եւ Պատմութեան վերաբերեալ երկասիրութիւններ, ձեռագիր կամ տպագիր, եւ կը փափաքին մասնակցիլ մրցանակաբաշխութեան, ի ունեան յուղարկել զայնս առ Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրն, ի Կ. Պօլիս, մինչեւ յառաջիկայ 18 Մարտ 1890 տարւոյ:

Տպագիր երկասիրութիւնք հարկ է որ երեք օրինակ յուղարկուին, եւ ձեռագիր մէկ օրինակ, որք ետ չեն տրուիր:

Համար 81

14/26 Նոյեմբեր 1889

Ի ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ ՀԱՅՈՅ

Կ. ՊՈԼԻՍ